ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

-- հոկտեմբերի 2020 թվականի №--Ա
ք. Երևան

«ԼԵՌ ԵՎ ՋՈՒՐ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՏՈՒԳԱՆՔ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2020 թվականի մարտի 11-ի №59Ա որոշման 3-րդ կետով «ԼԵՌ ԵՎ ՋՈՒՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը պարտավորեցվել է որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել «Արջուտ-2» փոքր հիդրոէլեկտրակայանի (այսուհետ՝ Կայան) շահագործման համար անհրաժեշտ ճշգրտված ջրօգտագործման թույլտվություն, ինչին ի պատասխան Ընկերության կողմից 2020 թվականի մայիսի 27-ի №19 գրությամբ Հանձնաժողով է ներկայացվել Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարության կողմից 2020 թվականի մայիսի 25-ի Կայանի շահագործման նպատակով տրամադրված №000073 ջրօգտագործման թույլտվության պատճենը,

բ) №000073 ջրօգտագործման թույլտվության 3-րդ կետով ջրառի վայր է նշվել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Նոր Խաչակապ համայնքի վարչական տարածքը, ինչից կարելի է ենթադրել, որ Հանձնաժողովի 2004 թվականի հուլիսի 30-ի №92Ա որոշմամբ Ընկերությանը Կայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության №0140 լիցենզիայի (այսուհետ՝ №0140 լիցենզիա) համաձայն լիցենզավորված գործունեություն իրականացնելու համար անհրաժեշտ գույքի մի մասը գտնվում է Նոր Խաչակապ համայնքում: Մինչդեռ, Նոր Խաչակապ համայնքին վերաբերող անհրաժեշտ գույքի հետ կապված որևէ փաստաթուղթ Ընկերության լիցենզավորման անհատական գործում առկա չէ: Հանձնաժողովը 2020 թվականի օգոստոսի 19-ի №ՍՇ/34.1-Մ4-3/3531-2020 գրությամբ պահանջել է ներկայացնել Նոր Խաչակապ համայնքի տարածքում գտնվող Կայանին վերաբերող գույքի նկատմամբ

իրավունքները հավաստող փաստաթղթերի պատճենները, որին ի պատասխան Ընկերությունը 2020 թվականի օգոստոսի 27-ի №29 գրությամբ տեղեկացրել է, որ ջրառի վայր նշված Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Նոր Խաչակապ համայնքի վարչական տարածքում գտնվող Կայանին վերաբերող անհրաժեշտ գույքի նկատմամբ իրավունքները հավաստող փաստաթղթերի ստեղծման գործընթացը սկսվել է: Հայտնել է նաև, որ «Արջուտ-2» փոքր ՀԷԿ-ի կառուցման համար առկա են եղել Արջուտ գյուղի գյուղապետի №2 շինարարության թույլտվությունը ջրընդունիչի, խողովակաշարի և կայանի շենքի շինարարական աշխատանքների կատարման համար՝ տրված 2003 թվականի ապրիլի 20-ին, հողահատկացման վերաբերյալ №7 որոշումը՝ տրված 2002 թվականի նոյեմբերի 13-ին (2005 թվականի սեպտեմբերի 2-ի որոշման №7 քաղվածք): Ընկերությունը հայտնել է նաև, որ հետագայում չափագրումների և քարտեզագրման ժամանակ պարզվել է, որ ջրընդունիչ ավազանը գտնվում է Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արջուտ գյուղին սահմանակից Նոր Խաչակապ համայնքի վարչական տարածքում: Ընկերությունը հայտնել է, որ ներկայումս ընթանում են համապատասխան աշխատանքներ փաստաթղթերի ձևակերպման հետ կապված, որոնք պատրաստ լինելու դեպքում կներկայացվեն Հանձնաժողով,

գ) Հանձնաժողովը 2020 թվականի սեպտեմբերի 1-ից Ընկերության նկատմամբ հարուցել է վարչական վարույթ՝ Կայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզավորված գործունեության համար անհրաժեշտ գույքի նկատմամբ իրավահավաստող փաստաթղթերի ուսումնասիրության նպատակով, որի մասին Ընկերությունը ծանուցվել է Հանձնաժողովի նույն օրվա №ԳԲ/34.1-Մ2-4/3696-20 գրությամբ,

դ) վարչական վարույթի ժամկետը, հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի և 2-րդ մասը, երկու անգամ 10-ական օրով երկարաձգվել է,

ե) վարչական վարույթի շրջանակում Ընկերությունը 2020 թվականի սեպտեմբերի 14-ի, 23-ի, հոկտեմբերի 1-ի, 13-ի, 16-ի, 19-ի, 20-ի համապատասխանաբար №47, №53, №54, №64, №65, №66, №67 գրություններով հայտնել է, որ համապատասխան իրավունքների գրանցման գործընթացը շարունակվում է, և Հանձնաժողով է ներկայացրել՝ խողովակաշարի սպասարկման նպատակով սերվիտուտի իրավունքով Արջուտ համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողամասերը տրամադրելու վերաբերյալ Արջուտ համայնքի ղեկավարի

որոշումների պատճենները, Կայանի դերիվացիոն խողովակաշարով ծանրաբեռնված հողամասերի նկատմամբ սերվիտուտի իրավունքի պայմանագրեր, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Նոր Խաչակապ համայնքի հետ կնքված հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման մասին պայմանագիրը, հողամասերի նկատմամբ սերվիտուտի իրավունքների պետական գրանցման 2020 թվականի հոկտեմբերի 15-ի №15102020-06-0013, №15102020-06-0014, №15102020-06-0015, №15102020-06-0026 վկայականների պատճենները և այդ հողամասերի ճշգրտված հատակագծերը, Կայանի գլխամասային հանգույցի կառուցապատման իրավունքի համար անհրաժեշտ հողամասի նկատմամբ կառուցապատման իրավունքի պետական գրանցման 2020 թվականի հոկտեմբերի 20-ի №20102020-06-0017 վկայականը,

զ) №0140 լիցենզիայի պայմանների 21-րդ կետի համաձայն՝ լիցենզավորված անձը պարտավոր է Հանձնաժողովի պահանջով ներկայացնել լիցենզավորված գործունեության վերաբերյալ սպառիչ տեղեկատվություն,

է) հարուցված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը խախտել է №0140 լիցենզիայի պայմանների 21-րդ կետը, քանի որ չնայած Հանձնաժողովի պահանջին, չի ներկայացրել Լոռու մարզի Նոր Խաչակապ համայնքի վարչական տարածքում գտնվող՝ Կայանի մասի նկատմամբ Ընկերության իրավունքները հավաստող ամբողջական փաստաթղթեր (այդ թվում՝ գլխամասային հանգույցի նկատմամբ)՝ այդ կերպ խոչընդոտելով նաև Հանձնաժողովի՝ կարգավորման գործառույթների պատշաճ իրականացմանը. քանի դեռ Ընկերության կողմից չեն ներկայացվել Կայանի վերաբերյալ բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը Հանձնաժողովի կողմից №0140 լիցենզիայի պայմաններով ամրագրված գործունեության իրականացման աշխարհագրական տարածքը ճշգրտվել չի կարող,

և հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին և 11-րդ մասերը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. №0140 լիցենզիայի պայմանների 21-րդ կետի խախտման համար Ընկերությանը տուգանել 1.000.000 դրամի չափով։
2. Ընկերությանը՝

1) սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից մեկամսյա ժամկետում որոշման 1-ին կետով նախատեսված գումարը 900005242327 հաշվեհամարով փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե,

2) սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից չորս ամսվա ընթացքում Հանձնաժողով ներկայացնել Կայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզավորված գործունեության համար անհրաժեշտ գույքի նկատմամբ իրավահավաստող բոլոր փաստաթղթերը,
3) ընդունել ի գիտություն, որ իրավասու է սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
--- հոկտեմբերի 2020թ.